

1538ին շինուեցաւ աս քաղաքս, որուն մէջը կան շատ մը եկեղեցիներ, մենաստաններ, ուսմանց վարժարաններ և այլն. գեղեցիկ փողոցներ ունի, և հրապարակները աղբիւրներով զարդարուած են: Բնակիչն է 40,000ի չափ:

Պոկոթա համանուն գետը՝ քաղքիս եզերքները բարձր ջրվէժ մը կը ձևացընէ, որուն ջուրը գրեթէ 600 ոտնաչափ

բարձրութենէ՝ ժայռերէն վար կը թափի. բանտի դեղին քովերն ալ կան բնական ժայռերէ ձևացած հրաշալի կամուրջներ. որոնց մէկուն բարձրութիւնը 298 ոտնաչափ է, և ամբողջ կամուրջը միակտուր քար մըն է 4/4 ոտք երկայն և 35 ոտք լայն. ուրիշ մըն ալ կայ աւելի նուազ բարձր՝ որ իրարու կպած երեք ժայռերէ ձևացած է:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց Մ Ե Ծ Ա Ց

Ա Ն Ի

Է. ԵԿԵՂԵՑԻՆ. — Եօթներորդ եկեղեցին 'ի միջավայրս անդ քաղաքին է մօտ առ Առաքեալն: Սա որչափ ինչ յաւերակացն նշմարի, մի 'ի գեղեցկաշէն եկեղեցեացն էր. այլ արդ հիւսիսային կողմն միայն կայ հանդերձ մասամբ խորանին, այլոցն առ հասարակ փլատակ կուտեալ շուրջանակի: Եկեղեցիս թէպէտ և փոքր է տարածութեամբ, այլ այնու առաւելու քան զայլս՝ զի ընդ յատական ծայր 'ի ծայր ներքնատուն է գետնափոր կամարակապ և ցարդ անկործան: Արձանադիր չերևի ուրեք 'ի մնացորդ մասունս նորին:

Ը. ԵԿԵՂԵՑԻՆ. — Ութերորդ եկեղեցին ամենափոքր 'ի վերայ ճանապարհին կայ որ հանէ 'ի միջնաբերդն: Եւ սորա քանդեալ երկոց կողմանցն՝ տեղի խորանին հանդերձ կողմնակի դրամբն կանգուն կայ ցարդ վայելուչ յօրինուածովք:

Թ. ԵԿԵՂԵՑԻՆ. — Անցեալ 'ի միջնաբերդն ընդառաջ լինի 'ի հարաւոյ կուսէ նորա իններորդ եկեղեցին 'ի զառիվայր տեղով և մօտ 'ի պարիսպն, որ և բարձրահայեաց դիտէ յԱխուրեանն գետ: Եւ սա միջակ է մեծութեամբ հոյակապ, և այլատարազ ձևովն, վսեմ հանգամանօքն ճարտարապետութեան, և գմբէթիւն և ստուարութեամբ քարանցն առ հասարակ, և առ երկ գեղեցկաշէն մատրամբն. այլ աւանդ զի մեծաւ մասամբ քայքայեալ մնացորդ մասունքն յողւոց հանել տան հնախոյզ հայրենասիրին որ չհանդարտէ անթաց աչօք և անկարեկիր սրբտիւ մեկնիլ 'ի տեղովն:

Ժ. ԵԿԵՂԵՑԻՆ. — Տասներորդն է 'ի կողմն մի միջնաբերդին 'ի հիւսիսոյ նախասացեալ եկեղեցւոյն 'ի վերայ բլրի. ձև նորա կամարակապ, որմունքն հասարակ և ոչ նշանաւոր ինչ 'ի նմա:

Այդպիկ տասներին եկեղեցիքդ որ կանգուն և որ կիսափուլ երևին 'ի քա-

ղաքին . թէպէտ և գտանիցին այլ ևս երկու կամ երեք , այլ իսպառ հիմնայա-
տակ եղեալ անծանօթ մնան թէ որպիսի իցեն շինուածք :

ՄԶԿԻՔՆ . — Բայ 'ի տասանց անտի եկեղեցեաց կանգուն կայ տակաւին և
Մզկիք մի 'ի հարաւոյ կուսէ քաղաքին ոչ շատ հեռի 'ի միջնաբերդէն , 'ի ծայր
զառիվայրին որ տանի 'ի գետն : Զհանգամանաց սորա չունիմ որոշակի ինչ ա-
սել յեկեղեցւոյ արդեօք 'ի մզկիթ փոխեալ , եթէ հիմնարկեալ իբրու մզկիթ .
քանզի եկեղեցւոյ ձև չերևի 'ի նմա , ոչ տեղի խորանի և ոչ յորմունսն նշան
քրիստոնէութեան խաչի կամ հրեշտակաց . սակայն և գլխաւոր վայր մզկիթի
միհրապն չիք 'ի նմա , զի որմն հարաւոյ միայար անշեղ ամբառնայ ծայր 'ի ծայր .
նմին իրի թուի ինձ նախ յայլ պէտս սահմանեալ շինուածք , և ապա առ թա-
թարօք կամ Պարսկօք 'ի մզկիթ փոխեալ է , յաւելեալ նմին մինարէ և արձա-
նագիր զորոց զկնի : Զև նորա է երկայն քառակուսի յարեւելից յարեւմուտս և
երկու կարգ սեանց 'ի նմա երեք երեք , որով յերիս միջոցս բաժանի շինուածն :
Յարկ նորա 'ի մէջ իւրաքանչիւր սեանցն ուրեք տափակաձև կամարօք յարկեալ
և ուրեք ամենեւին 'ի ձև առաստաղի , քառակուսի մեծամեծ քարինս՝ չգիտեմ
նրպէս՝ առ իրեարս եղեալ շուրթն առ շուրթն : Ի հիւսիսոյ յատակ նորա
հաւասար է արտաքին գետնոյն , յորմէ անընդմիջաբար զառիվայր շեղեալ 'ի
ձորն կոյս՝ 'ի հարաւոյ կուսէ հիմնարկեալ է հարաւակողման որմոյն 'ի խորոց
անտի ձորոյն մինչև ցհաւասար բարձրութիւն յատակի հիւսիսակողմանն . և ապա
'ի վեր ամբարձեալ հարաւային որմն մզկիթին հանդերձ մեծամեծ պատուհանօք
որ բարձրահայեաց դիտեն ընդ Ախուրեանն գետ : Ընդ յատակաւ մզկիթիս ներք-
նատունք են կամարաչէնք՝ միջնադրունս ունելով իւրաքանչիւր անցանելոյ 'ի միոյ
'ի միւսն : Մինարէ նորա սովորական ձևով , և կայ յարեւելից կուսէ կցեալ ընդ-
անկեան հիւսիսային որմոյն : Յարկ մզկիթիս անկործան է . այլ յորմոցն՝ արեւմ-
տեանն կիսով չափ անկեալ և հիւսիսայինն առ մինարէիւ քայքայեալ փոքր մի ,
և խաթարեալ գետնափոր տեղիքն : Արձանագիրք ամենայն 'ի հիւսիսոյ կան ար-
տաբուստ . յորոց նախ արաբացի կամ պարսկերէն է բաղմատող . յետ այնորիկ
տող մի քիւֆի խոշորատառ և ծաղկազարդ : Երկատեսակ գրութիւնք բարձրա-
քանդակք էին , զորոց չմարթացայ առնուլ զհաւասարն . և զի բարձր էր տեղին ,
և սանդխոցն դիմարգել լինելոյ անպատկան՝ թէ կամէի թրջեալ թղթովք պըն-
դեալ 'ի վերայ առնուլ զպատկեր գրոցն : Սակայն ստորև դոցա կան այլ ևս ե-
ռատեսակ համառօտ յիշատակարանք . նախ վրացի և դարձեալ տաճիկ և ապա
հայ . զհայերէնդ և զվրացերէն որպէս կարծեմ բռնի տուեալ են գրել քրիստո-
նէից 'ի վերայ մզկիթին . և են այսպիսի .

چو کوهنیکو کوهنیکو چو کوهنیکو () چو کوهنیکو کوهنیکو کوهنیکو کوهنیکو :

Այսինքն . « Ի թուիս ՆԾԸ (1258) . ես Աթապէկ Զաքարիա հաստատեցի » :

سهرور سنه ۷۵۰ . . .

صنكر ايامك زكريا بن المرحو

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀՈՂՔՆ ԱԻՐՀՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ .

ի և այլ մինարէ մի գրեթէ 'ի միջակէտ քաղաքին բարձր՝ այլ չիք նորա մզկիթ , և ոչ աւերակքն երեւին 'ի տեղւոյն : Հայ արձանագիրն որ կայր 'ի վերայ նախա- սացեալ մզկիթին , կայ և 'ի վերայ այսր մինարէի հանդերձ քանի մի տաճկերէն տողիւք :

ԱՐՔՈՒՆԻՔ . — Ի մեծագործ շինուածոցն Մենոյ մի է և արքունի պալատն կա- ռուցեալ յարեմտակողմն քաղաքին 'ի ծայր քարափանն բարձու որ հայի 'ի վե- րայ Ծաղկոցաձորոյն յարեմտից և 'ի հիւսիսոյ , որպէս ինչ առաջը ձորոյն ձեւ- ցեալ են 'ի տեղւոյն . և է մօտ 'ի սուրբ Գրիգոր փոքր եկեղեցին զոր վեցերորդ- կոչեցաք 'ի կարգս եկեղեցեաց : Նիստ արքունեացս և տեսարանն նորա , որմունքն և ներքնափոր վայրքն յոյժ ահաւոր են . յարեւելից կուսէ կանգնեալ է դուռն պալատանդ գեղեցկաքանդակ՝ ըստ արեւելեան ախորժակաց , և է այսպիսի . 'ի շրջապատ նորա հարուստ մի տարածութեամբ երկուստեք և 'ի վերոյ ունի քա- ռակուսի թղաչափ ստուար քարինս ագուցեալ յորմն 'ի գոյն դեղին և սեւա , և քանդակեալ 'ի նոսա պէսպէս զարդս և ձեւ խաչի . որ 'ի հեռաստանէ և 'ի մօ- տոյ հաճոյական տեսիլ ընծայեն աչաց : Հիմն որմոյ դրանդ հաւասար է արտա- քին գետնոյն և անդէն շեղի ընդ զառիվայր Ծաղկաձորոյն . և ահա յայնմ՝ կող- մանէ մօտ 'ի յատակ ձորոյն 'ի վերայ քարաժայռիցն հիմնարկեալ արեմտեան և հիւսիսային որմոցն՝ ուղղաբերձ 'ի վեր ամբառնան բարձրագոյն քան զպա- ըիսպս բերդին : Յերկուս մասունս բաժանեալ են արքունիքդ որչափ ինչ յա- լերակացն նշմարի , արեմտեան և հիւսիսային . երկրորդիդ արտաքին որմունքն միայն կան և 'ի ներքոյ իսպառ խաթարեալ . իսկ առաջնոյն որոյ էր և դուռն զոր ասացաք , անկործան կան տակաւին և բաժանիչ որմունքն կամ անջրպետք սենեկացն թուով յոյժ սակաւուց և ոչ մեծամեծաց . անյարկ և մերկ են 'ի նը- կարուց որմունքն , որոց լոկ քարինքն երեւին երկթղաչափ քառակուսի առ հա- սարակ դեղնագոյն՝ որպէս զպարսպաց բերդին : Ընդ այն յոյժ զարմացեալ եմ՝ զի յորմունս պալատանդ մի միայն տեսի լուսանցոյց պատուհան որ հայէր 'ի Ծաղկոցաձորն . յորմէ գուշակեմ՝ թէ սովորութիւն ժամանակին ոչ էր 'ի կողմա- նէ՝, այլ ձեղուանցն լուսամտիւք լուսաւորել զսենեակս . որպէս և 'ի բազումս 'ի քաղաքաց ասիակողմանն պահի ցարդ սովորութիւնս այս , թէպէտ և առ նոսա անշուք եղանակաւ հեծանս գերանաց մի զմիով եղեալ շուրջանակի և տակաւ առ իրեարս մերձեցուցեալ յամենայն կողմանց՝ զմբէթ իմն ձեւացուցանեն 'ի կեդրոնին բաց : Սակայն յարքունի պալատանս թէպէտ և պահեալ ևս էր այդ- սովորութիւն , այլ ո՞ գիտէ թէ որպիսի կամարօք յարկեալ և զմբէթ մեծաշուք կայր 'ի կեդրոնի սենեկացն իւրաքանչիւր՝ փեղկօք և պատուհանօք շուրջանակի : Ներքնատունք արքունեացս ահեղագոյնք են քան զվերնայարկն : Ի հարաւոյ կու- սէ դրանն վերնոյ խոտորեալ ընդ զառիվայր գետնոյն , ուր աւերակօք և ան- հարթ ելեւէջիւք խանդարեալ է վայրացն և արահետ ուղւոյն աներեւութացեալ է իսպառ , յանդիման լինին մուտքն հարաւահայեաց , և են այսպիսի . յարե- մուտս ընդ երկայնութիւն պալատանդ կարգ մի կամարաց ձգեալ՝ որմասեամբք զատուցեալ է յիրերաց , և երեսը նոցա ուղղահայեաց ըստ որմոյ վերնայարկին . և մեղրաչափս իբրեւ երկու առ 'ի ներքս նոցա որմ ածեալ ուղիղ՝ խորանաձեւ յօրինեալ են կամարավայրքն . և յորմն անդ՝ ոչ յամենեսին՝ մուտք բացեալ

փոքրու տարածութեամբ. ընդ որ անցեալ 'ի ներքս տեսանին անձուկ փողոցք, և 'ի փողոցացն առաջնորդեալ այլ և այլ խաւարչտին ներքնատունք, ոմանց անձուկս ունելով դրունս և ցած, և ոմանց արձակս: Առ հասարակ կամարաշէնք են ներքնատունքդ. ոմանք բարձր մինչև ցյատակ վերնայարկին հասեալ, և ոմանք ցածունք. և միւս ևս անցք որ հանէ ընդ զառիվայր Մաղկաձորոյն, թէ պէտ և քանդեալ և աւերեալ, որպէս բազում ուրեք որմունք ներքնատանցք քայքայեալ և մեծամեծ քարանցն շեղջակուտեալ առ ետեղ: Քանդմունք այն պիտի կան 'ի տեղունջն յայնմիկ, զի և գեղջուկ տխմար տեսեալ վկայէ թէ ոչ տարերաց բռնութեան արդիւնք են այնորիկ և ոչ պատերազմաց, այլ վայրաւատին մարդոց և անտոխախոյզ դատարկապորտից, թէ գանձս գրամոց գտանել մարթասցին յորմունս ներքնատանդ, որպէս և ցայսօր 'ի նոյն մօտի կայ խուժան գեղջէիցն շուրջանակի: Քանզի ոչ միայն զյատակ գետնոյն վերիվայր արարեալ են, այլ և յորմունսն որք 'ի մեծամեծ քարանց շինեալ են և ոչ որպէս զվերնալարկին՝ և անխախտ կան հիւսուածք նոցա, ուստեք ուստեք քարանցն բռնի և երկաթի գործեալ գերծուցեալ է 'ի շարիցն, և զթանձրութիւն որմոյն փորեալ վերիվայր. չգիտեմ՝ քան զխիճ և զփոշի զինչ այլ տեսեալ իցեն: Արձանագիր չիք ուրեք յորմունս արքունեաց. այլ այս միայն նախնի յիշատակ, զի 'ի հիւսիսակողման մասին 'ի վերայ որմոյն արտաբուստ՝ 'ի կուսէ Մաղկոցաձորոյն՝ 'ի բարձու կայ բարձրաքանդակ պատկեր առն զինուորականի. գլուխ նորա խորտակեալ է, և տարազ զգեստուցն՝ ամղան զինուորի զգեցեալ որ մինչև ցծունկան իջանէ, և գօտեաւ զսպեալ զմէջս. մի ձեռն տարածեալ՝ գաղափար մի ունելով շինուածոյ իրիք, թերեւս զարքունեացն: Չսա պատկեր թագաւորի կոչեն, այլ չէ յայտ ոյր 'ի թագաւորաց:

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ՈՒՂԻՆ. — Յարեւելակողմն քաղաքին առ կողիւք եկեղեցւոյն Լուսաւորչի իջեալ փոքր մի ընդ զառիվայրն և շրջեալ զարեւելիւ՝ տեսանին զկողիւք դարահոսին վարկպարազի անձաւք երկու առ միմեանս, և յառաջ անցեալ քայլս ինչ յանդիման լինին մուտք ստորերկրեայ ուղւոյն. նախ 'ի քաղաքն կոյս փարեալ, և ապա շեղեալ ընդ հարաւ 'ի գետն կոյս: Որ զԵւդոկիոյ, զԱմասիոյ և զԲաբելոնոյ գետնափոր տեղիս տեսեալ իցէ, նմա դիւրին է զառաւելութիւն նոցին ճանաչել քան զսորայս, որք հոյակապութեանն մասամբ ահեղք են, լայնարձակք և 'ի մտից անտի մինչև ցյատակն առ 'ի շեղ, կամար 'ի վերոյ կոփեալ 'ի բուն անդ ապառաժի և աստիճանք սանդղոց ստորեւ. այլ սա անհամեմատ է նոցին. մի զի գետինն 'ի նմին վայրի խճաքար է դիւրափուլ և ոչ ապառաժ, և դարձեալ անձուկ և ցածուն, որպէս զի չմարթի և կորաքամակ ընթանալ 'ի նմա, այլ հարկ է և զծունկան թեքել: Չայս ասեմ որպիսի ինչ նախ առաջին երեւին. իսկ անտի և անդր անծանօթ է ինձ. և զի չկայր առ իս փորձ ուղեցոյց, չհամարձակեցի անփորձ արամբ մտանել 'ի ներքս և շրջել յամենայն կողմանս: Աւանդութիւն 'ի բերանս ամենեցուն այսպիսի է. փոքր մի յառաջ անցեալ 'ի ներքս կոյս՝ յայլ և այլ առաջս բաժանի ուղին յայսկոյս յայնկոյս, 'ի քաղաքն և 'ի գետն. որ 'ի քաղաքն կոյս ուղղեալ են՝ հարթք են զի ընդ գաշտավայրիւք են, այլ որ 'ի գետն կոյս՝ անհնարին զառիվայր, որպէս ինչ արտաքին ձորամէջն երեւի: Մի յառաջից ուղւոյն, ասեն, տանի 'ի ներքուստ Ախուրեան գետոյ և հա-

նէ 'ի հանդիպոյ ձորեղերն բարձու : Եւ այս չէ սուտ . զի մինչև ցայսօր 'ի հանդիպակաց եղերն՝ ուր սահման է Ռուսաց , 'ի գաղաթն բլրակի միջ աշտարակ կայ , և անդր հանէ ուղին . թէպէտ և այժմ կիսակործան կայ աշտարակն և ելք նորա խցեալ 'ի Ռուսաց , զի մի ոք գալտ աստի անդր փախիցէ : Պատմեն ևս զի Տաճկի ուրուք անհաւան գտեալ պատմելեացն թէ ուղին այն 'ի ներքուստ գետոյն յայնկոյս տանիցէ , կամեցեալ իցէ անձամբ զփորձ առնուլ զիրացն . մտանէ 'ի ներքս ամենայն կարևոր կազմութեամբ , և բազում տառապանք յառաջ անցեալ՝ սկսանին շիթք ջրոց կաթիլ վերուստ 'ի խոնարհ , և իմացեալ հաւաստեալ թէ կշիռ ընդ գետովն կայ՝ դառնայ յետս :

ԲԱՂԱՆԻՔՆ . — Ի հիւսիսոյ կողմանէ նորին Ղուսաւորչի եկեղեցւոյն կայ Բաղանիք մի աւերակ : Ի բաղանեաց աստի դիւրին է գուշակել որչափ կուտեալ թանձրացեալ է աւերակաց ամենայն ուրեք յԱնի . քանզի զբաղանեքդ շուրջանակի այնչափ թանձրացեալ է աւերակաց մինչև հաւասարել յարկաց նորա , և վերուստ 'ի վայր 'ի քանդեալ մասանցն լինի իջանել 'ի ներքս . որոյ այսպիսի է ձև : Նախ բոլորչի սենեակ գմբէթարդ , և շուրջ զնովաւ չորս ևս այլ սենեակք դէմ ընդդէմ միմեանց քառաթև՝ դրոնս ունելով իւրաքանչիւր ցածունս անցանելոյ 'ի նոսա 'ի միջին սենեկէն . և ձև նոցա լայնանիստ 'ի կցուածի անդ ընդ միջնոյն , և աւարտեալ յաղեղնաձև սրանկիւն , կամ լաւ ևս ասել տերեւաձև . ըստ նմին ձևոյ և կամարայարկքն են յօրինեալ : Տեղի ծորակաց ջրամբարիցն կան տակաւին , այլ ամենայնն խաթարեալ :

Այդդքիկ են ահա ամենայն մնացորդք շինուածոց քաղաքին Անուոյ որ երևին որիշ , թէպէտ առաւելագոյն մասամբ կիսեղծք իցեն : Սակայն յաւերակսն երևին ուրեք ուրեք և մասունք ստուար որմոց , կամարաձև շինուածոց , կէս մի քայքայեալ և կէս մի թաղեալ ընդ հողով . ուրեք մեծամեծ անտաշ քարինք մի զմիով կուտեալ՝ նշան ձիթահան գործարանաց 'ի տեղւոյն : Այլ 'ի տանց չէ մնացեալ և ոչ մի . զի աւերակ նոցա հողոյ հաւասար՝ հիմունքն ևեթ երևին քառակուսի՝ ոմն մեծ և ոմն փոքր զերեսօք գետնոյն , և քարինք նոցա կուտեալ 'ի ներքս և արտաքոյ :

Իսկ այն զոր ասեն հազար և մի եկեղեցի յԱնի , պարտ է իմանալ և արտաքոյ պարսպին 'ի հիւսիսակողմն . զի թէ 'ի ներքս 'ի պարսպին էին ամենեքին , չմնայր տեղի և ոչ տան միոյ , և եթէ կիսով չափ միայն , սակայն և այնպէս անհնարին էր թէ տանէր անձկութիւն տեղւոյն : Նմին իրի զի մի զհասարակաց աւանդութեամբն արհամարհիցեմք , մանաւանդ զվկայութեամբ ժամանակակից մատենագրացն Մատթէոսի և Կիրակոսի , հարկ է ասել թէ բնակութիւն քաղաքին ձգեալ և արտաքս քան զպարսպն ընդ ընդարձակութիւն դաշտավայրին տարածէր ընդ հիւսիս և ընդ արևելս : Ի հիւսիսակողմն քառորդաւ միով ընդ տարածութիւն դաշտին երևին ցայսօր նշանք աւերակաց , այլ ոչ որպէս 'ի ներքս , զի մանր են քարինքն և ծածկեալ ընդ հողով , և յատակեալ հարթեալ վայրքն ամենայն 'ի բազում երթևեկութենէ սայլորդաց . և մեծամեծ քարանց անտեսութիւն՝ զի օր ըստ օրէ հարկաւ բարձեալ անտի և սպառեալ է , զի ամենայն վայրքն մօտևորագոյն են շրջաբնակացն քան ներքին կողմն քաղաքին : Այն ևս հաւաստէ զասացեալս զի 'ի նոյն կողմն քառորդաւ հեռի 'ի քաղաքէն կառու-

ցեալ կայ փոքր եկեղեցի մի Զօպան քիլիսեւսի ասացեալն՝ բոլորաշէն և երկայն դմբէթիւ . և նախ քան զայդ այլ մնացորդք աւերակաց երկուց մօտ 'ի քաղաքն : Իսկ 'ի կողմն արևելից նոյնօրինակք աւերակ խճից բաղում են . և ասեն թէ այդ կողմն շինին հասանէր մինչև 'ի Խալիշնորն երեք քառորդաւ հեռի 'ի քաղաքէն , և այլք թէ մինչև 'ի Հոռոմոսի վանան , այն է Խօշավանք ասացեալն : Հանդերձ այնու զոր ասացաք , սչ միայն աշխարհագրի առն՝ այլ և ամենայն մարդոյ քաջ կշռեալ միանգամ զտարածութիւն պարսպապատ քաղաքիս , հաւատալ չմարթի նմա այնքանոյ բազմամարդութեան զոր պատմիչքն ասեն , թէ բազմամբօխ էր քաղաքն և բիւրք բիւրուց 'ի նմա յամենայն կարգէ և 'ի դասուէ 'ի հիացումն տեսողաց մինչև կարծել թէ մեծ մասն աշխարհիս Հայոց անդ իցէ : Քանզի եթէ տասնայարկս ասիցես լինել զտունս , տակաւին անտար է շատութեան պատմելեացն . զի բաց 'ի տանց՝ այլ բազմապատիկ շինուածոց հարկաւ լեալ էր անդ ըստ օրինի ծաղկեալ մայրաքաղաքացն . բաղում և այլ դատարկ վայրաց , հրապարակաց , զբօսարանաց , զինարանաց , զինուորանոցաց , գիւանաց , և այլ զի գիտեմք քանիպատիկ տեղեաց , որոց գրաւեալ ունէին զմեծ մասն քաղաքին . և եթէ այդ ընդ մեր հաշուով չանկանի , զհազար և մի եկեղեցին ո՞ր զետեղել կարասցուք : Վասն որոյ 'ի տիեզերահոշակ անուպնէ քաղաքին գուշակեալ և 'ի վկայութենէ ժամանակակից պատմչաց՝ թէ անբաւ մարդկան էր խմբարան , բզշէնս քաղաքին արտաքոյ պարսպին՝ հարկ է ասել տարածեալս յարևմտից մինչև ցկէս ճանապարհին Ալաճա և Ղօզլիճա գիւղից , զի և յայդ կողմն չպակասին աւերակք մանր քարանց ցրուելոց ընդ երեսս դաշտին , որպէս 'ի հիւսիսոյ և յարևմտից՝ զոր վերոյ ասացաք : Որպէս զի թէ զարտաքին մասն տասնպատիկ աւելի քան զներքինն ասասցուք տարածութեամբ , հաւանին միտք առ 'ի մատենագրաց պատմելեացն . յորմէ և զայն հաւաստեալ ասել ոչ երկրայիմ , թէ ներքինն զինուորական դասուց , նախարարաղանց , իշխանաց և ազնուականաց էր բնակութիւն , ըստ վկայելոյ փոքր 'ի շատէ յիշատակարանի իրիք , և արտաքինն հասարակ մարդկան . և շինուածք տանց և եկեղեցեաց ներքնոյն հոյակապք են , և արտաքնոյն ոչ այնպէս , յորմէ անհետ եղեալ են իսպառ բաց 'ի հովուաշէն եկեղեցւոյն :

ԾԱՂԱՌՅԱՅՈՐՆ , ԵՒ ԿՐԳԱԿՔ Ի ՆՄԱ . — Որպէս յիշեցաք յառաջագոյն , Ծաղկոցաձորոյ սկիզբն առեալ յարևմտեան դրանէ բերդին , որ այն ինքն է Դուռն Ծաղկոցի , երթալով երթայ և զառիվայր աւարտի մինչև 'ի չափ մի , և նովին չափովն դաշտանայ՝ բաժանեալ յայլ և այլ առաջս , 'ի հիւսիս , յարևմուտս , և 'ի հարաւ՝ որ յԱխուրեանն հանէ գետ . և լայնութիւն նորա ուրեք քարընկէց մի և աւելի , և այլուր անձկագոյն ևս : Յատակ ձորոյդ թէպէտ հողային և մեծաւ մասամբ մշակեալ , սակայն կողմանք նորա քար են , ոչ ապառաժ , այլ խճախառն որով և գիւրամաշ : Գեղեցկութեամբ և ահաւորութեամբ այլք 'ի ձորոց այլոց գաւառաց առաւելուն արդեօք քան զսա յոյժ . սակայն որով սա անուանի դատաւ՝ ոչ մի ոք ընդ նմա մրցել զօրեսցէ . քանզի քարեղէն կողմանք իւրաքանչիւր առաջից երկուստեք դէմ ընդդէմ միմեանց առհասարակ փորեալ են անթիւ բազմութեամբ 'ի չափ կրպակաց ոմն մեծ , ոմն փոքր , ոմն երկայնաձև առ 'ի ներքս և այլ ոմն յայլ և այլ սենեակս բաժանեալ , և մուտք դրանց 'ի միոյ 'ի միւսն անցանելոյ .

շատիցն լուսամուտ բացեալ 'ի վերուստ առ 'ի շեղ, և այլոց դրանն լուսով չա-
տացեալ. բազում ուրեք շարք կրպակացդ երկկարգեան են 'ի վերայ միմեանց :
Իսկ ուղին որ առաջնորդէր 'ի շարս իւրաքանչիւր կրպակաց 'ի ժամանակին՝ ոչ
ևս է. որ 'ի ստորին կարգին են հաւասար՝ գետնոյ եղեալ յաւերակացն կամ
փոքր մի 'ի վեր՝ դիւրամուտք են, և որք 'ի վերինն՝ դժուարամատոյցք : Քանզի
ժամանակաց հնութեամբ 'ի բռնութենէ տարերաց մանաւանդ քան թէ աշխար-
հակործան մարդոց՝ այնքան մաշեալ և փլեալ են երեւք կրպակացն, կամ թէ
ասել կողք ձորոյն, զի և ձևոյ վայելչութիւն չէ մնացեալ 'ի նոսա . օրինակ իմն
որպէս յօճառի ոք այլ և այլ ձևս փորագրեալ և ապա յանձրեւի դիցէ, զնոյն
օրինակ անցս կրեալ կարծիցես զկրպակսդ : Զի դրունքն մաշեալ շուրջանակի կո-
րուսեալ են իսպառ զձևս անկեանցն, և ճակատքն անհարթք 'ի զերծելոց մասանց
քարին 'ի տեղովէն . որպէս և դրունքդ 'ի բնական ուղղահայեաց ձևոցն թիւրեալ՝
ոմն առ 'ի շեղ յերկինս հայի և ոմն առ 'ի շեղ 'ի գետին . ոմն թիկունս գարձուցեալ
ընկերին և այլք գէմ ընդգէմ դարձեալ. և մասունք փլածոյն որիչ երեւին որ ան
կեալ դիզեալ կան ուր շատ և ուր սակաւ յեզերս ձորոյն : Սակայն ոչ միայն երեւք
փորածոյ կրպակացդ անշքացեալ են 'ի կործանմանց անտի այլ և ներքին նոցա
ոչ վայելչաձև ինչ է. զի դիւրին էր արտաքնոյն 'ի հեղեղաց յայդ չափս իջանել
տձևութեան, այլ ներքինն ոչ նոյնպէս . և թէ չիցէ ռխերիմ՝ ձեռին մխեալ 'ի նա
թշնամութեամբ, հարկ է ասել թէ 'ի սկզբան 'ի նոյն ձև փորեալ իցեն որպէս
ինչ տեսանի ցայսօր, ոչ կանոնաւոր կողմանք իւրաքանչիւր և ոչ անկիւնաւորք,
շատ համարեալ 'ի քարեղէն փորուածի վերիվերոյ նմանութիւն բերել ընդ փայ-
տակերտ շինուածոյ՝ առաստաղանման ձեղուամբն 'ի վերոյ, և կողմանցն և ան-
կեանցն զգալի երևութիւք : Զսոցանէ թէպէտ և չունիցիմք ուստեք գրաւոր վը-
կայութիւն կրպակս ասելոյ, և զնոյն ինքն զճաղկածորն ողջոյն վաճառանոց քա-
ղաքին, սակայն ոչ արհամարհելի է և աւանդութիւնն որ ցարդ անմեկնելի է 'ի
բերանոյ շրջաբնակացն : Եւ այն ևս հաստատուն ապացոյց է կրպակաց, զի 'ի բա-
զումս 'ի նոցանէ անեղծ կան ցայսօր պատուհանաձև մանր դարանք փորեալ յոր-
մունս, յումմն սակաւ և յումմն բազում և խիտ առ խիտ առ միմեանս . զոր
օրինակ տեսանի 'ի կրպակս դեղագործաց՝ տեղի տփոց խորչս խորչս գործեալ :

